

ՏԱՄԱՐԱԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարադպրոցային գիւմում են ուղղակի

Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բայի կիրակի և տօն օրերից):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն ընդուն:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր ըստ 2 կոպէկի:

ԲՈՎԱՆԵԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Երկուսից որն է լաւը:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Խմբագրութիւն: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: Անգլիա: Խաւքան: Նամակ Թիֆլիսային: Այսպէս լաւը:—ԽԱՐԻՆ ԼՈՐԻՆ:—ՀԵՌԱՅԻՆ ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ: Հողատիրութիւնը Եւրոպայում և մեր երկրի հայաբնակ մասում:

ԵՐԿՐՈՒՄՅՈՐԵ Ե ԼԱԻԸ

Երբ որ մենք նոր սկսեցինք հրատարակել «Մշակը», մենք մեզ նպատակ էինք դրել անխնայ յարձակվել մեր անգործ, անբարոյական, օտարացած ինտելիգենցիայի, մեր արդէտ և ֆնասար բարձր ուսում ստացածների վրա:

Այն ժամանակ մեր հակառակորդները սկսեցին մեզ պիտի մեղծեինք քանզի մենք ամեն հեղինակութիւններ... Յարձակվել բարձր ուսում ստացածների վրա, մերկացնել նրանց թէև իրական, խոշոր պակասութիւնները, ասում էին մեզ մեր հակառակորդները, նշանակում է կոտորել ամբողջ աշխուհի, նոյն իսկ բարձրագոյն, համալսարանական ուսման սկզբունքը և գաղափարը:

Ուրեմն մեր հակառակորդները, այն ժամանակ, այն կարծիք էին, որ մերկացնել ինտելիգենցիայի պակասութիւնները, մինչև անգամ եթէ համոզված էլ լինէինք թէ մեր ինտելիգենցիան անպիտան է,—ֆնասար և վտանգաւոր է, քանի որ ամբողջ համար հարկաւոր են հեղինակութիւններ:

Անցան տարիներ, այժմ նոյն հակառակորդները կարծես իրանց համար նպատակ են դրել հայրութեան մէջ ամեն քիչ թէ շատ

յայտնի գործողների վրա յարձակվել նրանց անունը կոտորել, նրանց միտքեր, հանդիսութիւնները կամ նոյն իսկ պաշտպանելով միմիայն ճշմարիտ անպիտաններին:

Մենք յարձակվում ենք անպիտան, անգործ ինտելիգենցիայի վրա,—այդ ֆնասար էր համարում մի յայտնի կուսակցութիւն, ասելով թէ մենք մեր այդ յարձակմունքներով ընտելացնում ենք ամբողջ չը յարգել ոչ մի հեղինակութիւն, ոչ մի ավաօրիտէտ: Իսկ այժմ էր նոյն կուսակցութեան մարդիկ յարձակվում են հայրութեան ամեն գործողների վրա,—նրանք չեն նկատում որ դրանով, ինչպէս շատ ուղիղ նկատել է մեր Կ. Պոլսի թղթակիցը, ընտելացնում են ամբողջ ամենապատ զգացմունքներ, այն է ասել բախտութեան զգացմունքներ:

Եթէ ամբողջ անպատճառ հարկաւոր են հեղինակութիւններ, ի՞նչ ճանապարհով կարելի է աւելի հեշտ կերպով հասնել հեղինակութիւնները ամբողջ յարգել տալուն,—ծածկելով անպիտանների պակասութիւնները, թէ յարգել տալով ճշմարիտ գործողների արժանաւորութիւնը:

Մենք մերկացնում ենք անպիտանութիւնը,—այդ ֆնասար էին գտնում մեր հակառակորդները: Իսկ վերջին ժամանակները որ չէ անցնում որ նրանք իրանք ամեն ջանք չը թափէին քիչ թէ շատ յարգելի գործողների անունը կոտորելու, այդպիսով ընտելացնելով ամբողջ ամենաանպիտաններին, ամենաուղիղ զգացմունքներ, ասել բախտութեան զգացմունքներ, դէպի իր միջից դուրս եկած, և դուրս եկող գործողները, կամ դէպի օտար երկիրներում յայտնող հայրութեան համար աշխատողները, — և այդ ֆնասար չեն համարում նոյն հակառակորդները, որոնք անդադար կրկնում էին

թէ ամբողջ հարկաւոր են հեղինակութիւնները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Խմբագրութիւն, 30 մարտի

Այս քանի տարի է մենք այցելում ենք Պիտերսբուրգի և չըջակայ հանքային ջրերը և կարող ենք խոստովանել որ շատ սակաւ պատահում է, որ ջրերը այցելող և խոստովանող բժշկիկ հիւանդը տուն վերադառնալ առանց օգնութեան: Եթէ երբեմն և պատահում է այդպիսի անապագութիւն վերջինը ըստ մեծի մասին կախեալ է երկու պատճառից. մինը՝ երբ հիւանդութիւնը շատ հինացած է, և երկրորդը՝ երբ հիւանդը ճիշդ չէ կատարած իր բժշկի խրատները և կամ թէ փոքր ժամանակի միջոցում փոխած է քանի բժշկիկներ:

Խաւքանչիւր հիւանդ պարտաւոր է նախ և առաջ խորհուրդ հարցնել բժշկիկ իր ընտելած քաղաքում հանքային ջրերը այցելելու մասին, որովհետև միայն այն բժշկիկը կարող է հաստատ վճռել այդ հարցը՝ որը իր աչքով տեսել և հետազոտել է հիւանդը:

Այն հազարաւոր հիւանդները, որոնք ամեն տարի դիմում են Պիտերսբուրգի առողջութիւն ստանալու և իրաւ բժշկիկում են մէկ կամ երկու ամառվան միջոցում, նրանք արդէն փորձած են տարիներով և դուր են այն բոլոր դեղերը, որոնք գտնվում են ապտեկայում:

Երկարատե հիւանդութիւն ունեցող մարդը ըստ մեծի մասին պէտք է յուսալ ապտեկայի վրա. հակառակ դեպքում չէ կորուստանում է ի դուր ժամանակը մինչդեռ ցարդ սաստկանում է և կարող է դառնալ անբուժելի: Նա իր փրկութիւնը պէտք է սպասէ մաքուր օդից, բարեխառն կլիմայից, պէտք է դորձածէ անհրաժեշտ այս կամ այն հանքային ջրերը միայն անպատճառ աղբիւրից: Պիտերսբուրգի եկող հիւանդների մէջ պատա-

հում են այնպիսի մարդիկ, որոնք անհամբեր լինելով չեն կատարում ինչպէս հարկն է բժշկի պատուէրները և քիչ ժամանակի մէջ չը զգալով շուտիկ օգուտ՝ դիմում են ուրիշ բժշկիկ:

Հասկանալի է որ այդպիսի վարմունքը ցուցանում է միայն հիւանդի տղիտղիկ իր ցաւի յատկութեան մասին, ըստ որում ճշ մէկ երկարատե հիւանդութիւն չէ կարող բժշկիկը կարճ ժամանակում, և առողջութիւն ստանալու համար պէտք է ունենալ համբերութիւնը և խստութեամբ կատարել բժշկի խորհուրդները: Բժշկի փրկելը անօգուտ դուր է, որովհետև խաւքանչիւր բժշկի որ դորձում է Պիտերսբուրգում՝ քաջ տեղեակ է հանքային ջրերի ներգործութեանը, ուրեմն հիւանդը կարող է վստահել բոլորովին իր բժշկի վրա:

Միտք է ինչպէս քանի հիւանդներ վերադարձան տուն Պիտերսբուրգի քանդակով թէ երկու ամիս բժշկվեցան չորս, հինգ բժշկների մօտ և ոչինչ օգուտ չը տեսան. եթէ այդ մարդիկ բժշկվէին մի բժշկի մօտ՝ անշուշտ օգուտ կը տեսային:

Պիտերսբուրգի և նրա շրջակայ հանքային ջրերը և հանքային աղաղանքները որ աստիճանի օգտաւէտ են կարելի է տեսնել մի քանի ստատիստիկական տղիտղից, որոնք վերաբերվում են իմ մօտ բժշկված հիւանդներին 1880 և 1881 թիւին:

Ամառը 1880 ամիս հիւանդների թիւը Պիտերսբուրգում և նրա շրջակայքում համարում էր—137. Կրանցից սիֆիլիսով հիւանդ էին—60, ակնաճի ցաւով—25, կոկորդի ցաւով—14, բրնձ ցաւով—14, ստամոքսի և աղիքների ցաւով—9, լիւմբալիզմով—4, ոտքի ցաւով—4, բարակացաւով—3, դրոմբուլիզմով—2, կաշու ցաւով—1, անդամաւործութեամբ—1:

Կուրս հանելով ակնաճի, բրնձ, կոկորդի և թոքի ցաւերը՝ մնացած 81 հիւանդներ բժշկված են հանքային ջրերով և աղաղանքներով (ванны):

60 սիֆիլիս ցաւից միայն երկու հոգի չը ստացան կատարեալ առողջութիւն, որովհետև հիւանդութիւնը շատ հինացած էր և խոր վերքեր կային կոկորդի մէջ: 9 ստամոքսով հիւանդներից միայն միւր չը ստացաւ օգուտ՝ այն էլ անդու-

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ՖԵՐՈՒԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՊԱՅԻՆ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՆԱՅԱԲՆԱԿ ՄԱՍՈՒՄ ԵՒ ՄԵՐ ԳԻՒՂԱՅՈՒ ԱՅՁԱՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

III. Եթէ այժմ ակնարկենք Եւրոպայի արեւելեան մասը, մենք կը գտնենք ֆեոդալական հողատիրութիւնը այստեղ ևս. խօսքս Ռուսաստանի մասին է: Ի հարկէ մեծ գանազանութիւն կայ Ռուսաց ֆեոդալիզմի և եւրոպական ֆեոդալական կարգերի մէջ. բայց հողատիրապետական յարաբերութիւնները միմեանց շատ նման են: Ռուսաստանում էլ երբեմն գիւղացիներն համայնքը բոլորովին ճորտ ու թէկնից պաշտ էր. այստեղ էլ իշխանները և առաջին թագաւորները (մինչև անգամ մինչև XVII դարի վերջը) ծառայող արեւելակամութեամբ ուժով փորձեցին տալին էին կալուածներ. այս իրաւաբանական կարգը յայտնի է Ռուսաց պատմութեան մէջ «система кормлений» անունով, այսինքն «կերակրելու կարգ»: Գիւղական կալուածները (вотчина) ծառայում էին արեւելակամների համար որպէս կերակրվելու աղբիւր: Այստեղ էլ առաջին ժամանակը կալուածները ունէին անձնական բնութիւն և կամայկամաց դառնան ժողովրդական տիրապետութիւն և յետոյ սեփականութիւն:

Ռուսաստանում գիւղական համայնքը ազատ և անկախ էր թէ իր անտեսական դրութիւնով և թէ ինքնապարտական իրաւունքներով: Ինչպէս Ռուսաց ծառայող արեւելակամների կարող էին մէկ իշխանից միւսի մօտ փոխվել, նմանապէս էլ գիւղացին իր բնէ անտի ունէր իրաւունք թողնել կալուածը և նրա տիրոջ, եթէ սա խիստ էր վարվում նրա հետ, և ծանր տուրքեր էր պահանջում կալուածը մշակելու համար: Այս է պատճառը, որ Ռուս գիւղացին մինչև XVI դարը անհամեմատաբար ազատ էր քան թէ նրա ժամանակակից եղբայրները Արեւմտեան Եւրոպայում: Ազատ թաւառական կեանքը թէև միասակար էր գիւղացու և կալուածատէրին տնտեսական կէտից, բայց իրաւաբանական կէտից նա ազատ էր կալուածատէրի հանդէպ և կամակորութիւնից: Միայն 1596 թ., երբ Բօրիս Գաղտնով «կապից գիւղացիներին» հօգից (привести къ землѣ), արգելելով նրանց մէկ կալուածից միւսը փոխվել, նա սկսեց օրից օր կորցնել իր հին անտեսական անկախութիւնը, իր հին իրաւունքները և ստրկանալ (խօսքս միայն կալուածական գիւղացիների մասին է և ոչ արքունական):

Եթէ մի քանիսը ուսմանից անհրաժեշտ են թէ Ռուս աղբիւր ի բնէ անտի խորթ է կալուածական սեփականութիւնը... նրանք չեն սխալվում. հին Ռուսաստանում ինչպէս և արեւմտեան Եւրոպայում ֆեոդալական կարգի առաջին դարերում, կալուածքը սեփականութիւն չէր: Գիւղացիները դառնան ճորտ և ստրուկ XVII դարի ընթացքում և XVIII դարի առաջին քառորդում: Այս ժամանակը Ռուսաց գիւղացիների դու-

թիւնը անտանելի էր. երբ նրանք XVIII դարում բոլորովին ստրկացան, նրանք էլ կ'օրցրին իրենց կապը հողի հետ, որովհետև կալուածատէրը կարող էր նրանց կենդանիների և անասունների նման աւանդ հողի ժախել:

IV. Նոր համեմատական ազգայնութիւնը ապացուցանում է թէ ֆեոդալական կարգը և հողատիրութիւնը յատկանշիչ է ոչ թէ միայն եւրոպացիներին, այլ և համարեա բոլոր Ասիական և Ամերիկական (Պերու և Մեխիկայի) ազգերին: Ի հարկէ ամեն երկիր տալիս է ֆեոդալիզմին իր առանձնայատկութիւնը, բայց էութիւնը և բովանդակութիւնը—մասնաւոր հողատիրապետական յարաբերութիւններ—մնում է մի և նոյնը: Ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք Պարսկաստանի վրա. մենք մասամբ սրան ենք պարտական մեր կալուածների գոյութեան:

Պարսկաստանում *), եթէ չենք սխալվում, ֆեոդալական յարաբերութիւնները մինչև այսօր էլ շարունակում են իրենց գոյութիւնը. զանազան մեծ գաւառների խառնուրդ (օրինակ համար Մակուա երկրի) ոչ այլ ոչ են, եթէ ոչ շահի վասալներ: Ինչպէս ֆեոդալական վասալներ, խաները ևս ստանում են երկրի վրա դատաւարական և կառավարչական իրաւունք, պարտաւորվելով օգնել շահին զօրքերով և փողով նրա թշնամիների դէմ: Չանազան կալուածներ, գիւղեր և մինչև անգամ գաւառներ յանձնում էր խանը իր անթիւ պաշտօնականներին և ծառաներին. սրանք

*) Այս տեղեկութիւնները մեզ հաղորդել են ծեր մարդիկ:

կառավարում էին ստացած գիւղը կամ գաւառը, ժողովում էին հարկերը ու տուրքերը յօգուտ խանի գանձին: Ինչպէս և հին Եւրոպայում, այստեղ էլ տուրքերը վճարվում էին երկրի բնական բերքերով: Տուրքերի չափը և քանակութիւնը որոշած էր տեղական ազաթներով, օրինակ Երևանայ նահանգում ժողովում էին խանի օգտին բերքերի 1/6, 1/7, 1/10 մասը: Խանի պաշտօնականները և ծառաները անուանվում էին «մուլլե աղա» (մուլլե տաղղ, ժողովող) իսկ ինքը հողատիրութիւնը և կալուածը «մուլլե»: Մուլլեաբանները պատկանում էր մի կտոր հող, որ անուանվում էր «աղա-թօր-փաղի» — աղաթօր: Մուլլեաբանական իրաւունքը չնորոգւմ էր խանը ժամանակով, մինչև ցմա՛հ. վերջին ժամանակը մուլլեաբանութիւնը ստանում էր ժողովական բնութիւն:

Մեր երկրի ֆեոդալական հողատիրութիւնը չը հասաւ այն զարգացմանը և չունեցաւ այն հետեւանքները ինչ Եւրոպայում. նա մեռաւ, բայց ոչ թէ բնական, այլ արեւմտական և ստարածած մասով: Հողատիրութիւնը այս դրութեան մէջ էր, երբ Ռուսաստանը նուաճեց մեր երկիրը: Ռուսաց կառավարչութեան առաջին ներկայացուցիչները մեր երկրում արին մի և նոյն սխալը, ինչ անգլիացիները Հնդկաստանում, ֆրանսիացիները Ալժիրում, և առհասարակ եւրոպացիները իրենց կօրօնակներում: Եւրոպացիները չեն ուսումնասիրում նուաճած երկրի անտեսական և իրաւաբանական կեանքը, չեն աշխատում ծանօթանալ տեղական բնակիչների իրաւաբանական համոզմունքների և հայեացքների հետ, որպէս զի նրանց կարգադրութիւնները և կառավարութիւնը համապատասխա-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՐԱՅՅԻՒՆ

Դ Ա Ի Թ Բ Է Կ Ի

III ԳԻՐԲԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆԷ Է 2 ՐՈՒՐԸ

Վեպի այս հատորի մենագրությունը թիվը պատկանում է բացառապես թիվը «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅՈՒՆՆՈՒՆ»։ Օտարաբարացիք կարող են գիտնել այս հասցեով։

ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ (на Головинском проспекте в д. Мирманова, № 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

7—10

ՎԻՇՆԱՅԻ ԱԹՈՒՆՆԵՐ

36 ՐՈՒՐԸ

ԵՓ. Ծառուբեանցի դէպքում

12—20

ՄԵԾ ՎԱՅՏԱՐՈՒՄՆ

ՄԻՆՁԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՆԵՐ 8 Կ. ՂԻՒԺԻՆԸ, ԾՐԱՐՆԵՐ 3 Կ. ՀԱՐԻՐԸ, ՍԱՎՈՅՆ 3 Կ. ՀԱՐԸ, ԱՐԻԻ ԺԱՄԱՅՈՑՆԵՐ 50 Կ., ՇՂԱՆԵՐ (նոր ոսկուց) Ժամացոյցի համար 50 Կ., կրաններ 10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կօթեր 25 Կ., կարամաններ 4 Կ., ՖԻՏՏԱՆԵՐ 3 Ր., ՏՐԻՆԵՐ 1 Ր., Հայելիներ 35 Կ., վարակներ 4 Ր., պիջակներ 6 Ր., ԱՄԲՈՂ ԶԱԳՈՒՍ 13 Ր., գլխարկներ 1 Ր., չը թըջող վերարկներ 6 Ր., շէօտկա 90 Կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒՐԱՄՆԵՐ 2 Ր. 50 Կ. ՂԻՒԺԻՆԸ, ՄԵՂԱՄՆՈՒՍ 32 Կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 Կ. ֆունտը, ԳՐԱՊ, տրիկո, ԱԲՏՄԵՆԻ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էփան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՅԻ։ 10—50

Պատիւ ունեմ. յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑԻՈՒՄ լաւ ԾԽԱԽՈՏԻ սիրողները և զործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Եւ երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծղխախոտը կարող է բաւականացնել ամենաբնական ծաշակին։ Ծխախոտի գինը, ֆունտը 3 լուբլըց մինչև 10 լուբլ, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 լուբլըց, մինչև 3 լուբլ։

Գործարանս գտնվում է 3-օրդ բաժնում Էնեազրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու զալլերէում, Կփորցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվին միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆՅԱՆՑ

17—25

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաններ, պանիր-չեստեր, խաւիար և այլն։ Մախվում են շատ էփան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ՄԷՁ

Նոյն տեղ ծախվում են. բաղկացած մահճակալ 8 Ր., ամբողջ ՀԱԳՈՒՍ 12 Ր., չը թըջող վերարկներ 6—18 Ր. և մեծ քանակութեամբ ՐԵՎՈԼՎԵՐՆԵՐ, զանախներ և այլն։

5—10

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ

Գօրծկանի պրոպետարի վրա, տուն ճարտարապետ Բէյլի։ Գրասենակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէից։

ԵՆԴՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՅԱՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արժուճում գտնվում է արժան գինով

Արժուճում գտնվում է արժան գինով

Արժուճում գտնվում է արժան գինով

Արժուճում գտնվում է արժան գինով

Արժուճում գտնվում է արժան գինով

Արժուճում գտնվում է արժան գինով

Արժուճում գտնվում է արժան գինով

14—60

Въ Редаціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Прошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Բ Ա Ք Ո Ւ Մ

ԱՋՆԱՌՈՐՈՎԻ Բաթումի գործարանից նոր բերված է մեծ քանակութեամբ ամենալաւ ԾԽԱԽՈՏ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐ։ Ծախվում է Միքայելեան կամուրջի վրա ԾԽԱԽՈՏ ԴԷՊՈՒՄ և Գօրծկանի փողոցի վրա ԲԱՄԱՋՈՎԻ խանութում։ Զանկացողները ըստանալ մեծ քանակութեամբ կարող են պատուիրել նոյն տեղը Միկայել Մերուրնութովին։

3—3

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի ռ Ն 13.

Աւելի էփան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՇՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակարար 8—30 Ր., չամարաններ 250—25 Ր., սակօցածներ 1. 30—12 Ր., ս ու ռ զ ու լ յ ն եր ճ աւարհի 6—35 Ր., մարաններ (porreby) 6—25 Ր., ս ա մ օ վ ա Ր ն եր 60 Կ.—1.25 ֆունտը, կուսանի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ կանալ ամաններ, ոււմի վալիկներ Ժրամօրնի 38 Ր.—75 Ր., հրացաններ երկու լուանի 6—32 Ր., աւելի վերներ ամենայն տեսակ 3. 50—30 Ր., պատրոններ, (գուլաններ) ըէփօլէրի, սիգար Բէնգարդի ֆարրիկից. պապիրոս և թամբաբու կուշնարովի գիլի պապիրոգի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չայու և կաֆէի) Լինէմի. կօթէ Լինէմի և Միկէլանի. Պետերբուրգու 40—1 Ր. 25 Կ. Հայելիներ ամենայն տեսակ 28 Կ.—240 Ր., պրոբկալ գինեվաճառներ, հանքային և զարկի (для зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пучк), պապիրոսներ սամարի և չայու, զանակ շանդալ զանազան ֆարրիկաների 1 Ր. 20 Կ.—25 Ր. զուլթուկ. զրչակիթներ 1 Ր. 80 Կ.—5—60 Կ. զանակ ջրի 1—60 Կ.—12 Ր., զանակ հացի 20 Կ.—1 Ր., հատր, կուսանի 1—40 մինչև 3—20 Կ. արիոր. միս կարելու մաշկնայ. Անգլիական ուլաներ, բրիտանական չայիկներ, կաֆէիներ, ամենայն տեսակ, ջրացներ կաֆէի համար, ֆիրանը—Ջուր մաքրելու, կրամալ կարթիկն 18 Կ., վաքս ֆրանսիայի ձախոյ, թուղթ փաշտի, կանվերտներ, սուրբուչ, մատիտ, գրիչ երկաթէ, զրչակիթ, քարտախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիկներ, գրաներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչավի և բրիտանական զուլթուկ 1—50 Կ. մինչև 12 Ր., չայու 45 Կ.—5 Ր., չուլմիչէք 45 Կ.—5 Ր., շամադաններ ամեն տեսակ 25 Կ.—12 Ր. Ջուլտ, պրոսպոլաններ վարչավու, ԲԵՂԻՆԻ ԿԱԼՈՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. Ջուլտ, շապիկներ, մարդկերանց զարուտիներ, գնախիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրիկ և շրքի, սանրեր շերմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, չառկաներ գլխի, շորի, սապրիկ, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատիկ կօճի և շայէ (гарусь) ֆէլ-չառիէք մարդկերանց և կանանց, պրոմաններ, բրիտանի, պապիրոսի ամաններ և մանր գոլաններէնի սպաւններ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտալէտ ջրեր, պուրա, Կիլիգրին ջրի քացախ, հոտալէտ պարաշկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՔՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКАДѢ) միջի փողոցում կաթիլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաբարացիք կարող են գիտնել հետեւեալ հասցեով. Тифлисъ Миралиу Н. Теръ-Никогосову.

24—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի ռ Ն 13.

Ապրիլի 11-ից (կիրակի) սկսած, մի քանի օր շարունակ, հրապարակական ԱՃՈՒՐԻՈՎ ԿԸ ԾԱԽՎԻ տիկին ՇԻՈՅՎԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՑԲԸ, որ մնացել է նրա մահից յետոյ և որ պարունակում է հետեւեալ առարկաներ. զանազան ՄԵՐԵԼ, ՀԱՅԵԼԻՆԵՐ, սեղանի և թէլի ՄԵՂՎԻՋ, սեղանի ձերմապիկներ, խոհանոցի ԱՄԱՆԵԼԻՆԵՐ, ԽԱԼԻՋԱՆԵՐ, արծաթեայ, ոսկեայ և թանգազին ԻՐԵՂԵՆԵՐ։

Աճուրդը տեղի կունենայ ԳՈԼՈՎԻՆՍԿԻ Պրոսպեկտի վրա զանվոյ տիկին ՇԻՈՅՎԻ տանը և նրա բնակարանում։

2—5

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի զրոյ ՎՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКИ» մահ կ ա կ ա ն գրողի հայերէն թարգմանութիւնը, ԵՐԿՈՒ ՏՈՆԱԾԱՌ՝ անուով։

Այս գրքիւ ընդունել էր տպագրելու Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու։ Տպագրված է Հատընտիր թղթի վերայ խոշոր տարբերով։

ԳԻՆԷ Է 20 ԿՈՊԵԿ։

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրադաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետեւեալ հասցեով։

Тифлисъ—на Авлабартъ Ивану Петровичу Назарянцъ.

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ մայիս ամսի կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով զանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ։

Մանրամասն ՊԱՐԱՊԵԼԻ, պայման ում և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞րքան ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողներին թողնել Մշակի՝ խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցեն։ 1—10

ԶՄԻՌՆԻԱՅԻ

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՈՒՂ» ամսագրին բաժանորդագրվում են Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում։ Տարեկան գինը, 12 տետրակի 10 լուբլ է։ Հասցէն՝ Тифлисъ, Газетное Агентство В. Шавердова. 10—10